

ՓՈՒԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

**Հայ աստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության եւ
Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության
գործակալության միջեւ**

Հայ աստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը,

այսուհետ՝ ներքին գործերի նախարարություն, որին ենթակապետական
մարմին է հանդիսանում ոստիկանությունը,

եւ

**Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության
գործակալությունը,**

այսուհետ՝ Եվրապոլ,

այսուհետմիասին՝ Կողմեր, կամ առանձին՝ Կողմ,

հաշվի առնելով Եվրոպական խորհրդարանի եւ խորհրդի 2016 թվականի
մայիսի 11-ի «Եվրոպական միության իրավապահ ոլորտում
համագործակցության գործակալության (Եվրապոլ) մասին եւ խորհրդի թիվ
2009/371/ԱՆԳ, 2009/934/ԱՆԳ, 2009/935/ԱՆԳ, 2009/936/ԱՆԳ եւ 2009/968/ԱՆԳ որոշումները
փոխարինող եւ դրանք ուժը կորցրած ճանաչող» թիվ 2016/794 (ԵՄ) փոփոխված
կանոնակարգը (այսուհետ՝ Եվրապոլի կանոնակարգ), մասնավորապես՝ դրա
23-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հայ աստանի Հանրապետության իրավապահ մարմինների
եւ Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության
գործակալության միջեւ համագործակցային հարաբերությունների
ստեղծմանն ուղղված՝ 2021 թվականի սեպտեմբերի 16-ի եւ 28-ի աշխատանքային
համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) եւ մասնավորապես դրա 9-րդ
հոդվածը,

նկատի ունենալով, որ Համաձայնագրի հիման վրա Կողմերի միջեւ

համագործակցության համար պահանջվում է կապի սպայի նշանակում,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Կապի սպան

1. Կողմերը համաձայնում են մեկ կամ ավելի կապի սպայի (այսուհետ՝ կապի սպա) նշանակելու միջոցով ընդլայնել Համաձայնագրով սահմանված համագործակցությունը:

2. Կապի սպաների թիվը համաձայնեցվում է Կողմերի միջեւ:

Հոդված 2

Կապի սպայի առաջադրանքները

Կապի սպայի առաջադրանքն է աջակցել եւ նպաստել Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների, Եվրապոլի եւ Եվրոպական միության անդամ պետությունների միջեւ համագործակցությանը՝ Համաձայնագրին համապատասխան: Կապի սպան մասնավորապես պատասխանատու է Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների, Եվրապոլի եւ Եվրոպական միության անդամ պետությունների միջեւ կապերի հարցում աջակցության եւ տեղեկատվության փոխանակմանը նպաստելու համար:

Հոդված 3

Կապի սպայի կարգավիճակը

1. Կապի սպան համարվում է Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների պաշտոնական ներկայացուցիչը Եվրապոլին առնչվող հարցերում: Եվրապոլն իր հնարավորությունների սահմաններում նպաստում է կապի սպայի՝ Նիդերլանդներում կեցությանը. այն մասնավորապես նպաստում է Նիդերլանդների համապատասխան իշխանությունների հետ արտոնությունների եւ անձեռնմխելիության

հարցերով շփու մներին այ նքանով, որքանով անհրաժեշտ է:

2. Կապի սպան Համաձայնագրի մեջ սահմանված քրեական իրավախախտումների կանխարգելման եւ դրանց դեմ պայքարի համար պատասխանատու մարմինների ներկայացուցիչն է:

3. Կապի սպան իր առաջադրանքները կատարում է Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների անունից, և վերջինիս նշանակմամբ Եվրապոլի հետ որեւէ աշխատանքային հարաբերությունն չի հաստատվում:

Հոդված 4

Տեղեկությունների փոխանակումը

1. Եվրապոլի եւ կապի սպայի միջեւ տեղեկատվության ցանկացած փոխանակում տեղի է ունենում միայն Համաձայնագրի դրույթներին համապատասխան: Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների եւ Եվրոպական միության անդամ պետությունների՝ Եվրապոլի ազգային ստորաբաժանումների կամ երրորդ կողմերի համակարգողների միջեւ տեղեկատվության ցանկացած փոխանակում տեղի է ունենում համապատասխան կիրառելի օրենսդրության համաձայն:

2. Տեղեկատվություն փոխանակելիս կապի սպան ուղղակիորեն հաղորդակցվում է Եվրապոլի հետ՝ Եվրապոլի կողմից այդ նպատակով նշանակված ներկայացուցիչների միջոցով: Կապի սպան ուղիղ հասանելիություն չունի Եվրապոլի կողմից Եվրապոլի կանոնակարգի 18-րդ հոդվածին համապատասխան մշակված գործառնական տեղեկատվությանը:

Հոդված 5

Գաղտնիությունը

1. Ներքին գործերի նախարարությունն ապահովում է, որ կապի սպան հասանելիություն ունենա գաղտնի տեղեկատվությանն առնվազն «CONFIDENTIEL UE/EU CONFIDENTIAL» կամ համարժեք մակարդակով: Գաղտնի տեղեկատվության հասանելիություն ունենալու վկայականը կապի սպային

տրամադրվում է ազգային անվտանգության իրավասու մարմնի կողմից եւ ներկայացվում է Եվրապոլին: Դրանում հստակորեն նշվում է գաղտնի տեղեկատվությանը հասանելիության ունեցող կապի սպան, գաղտնի տեղեկատվության հասանելիության աստիճանը եւ դրավավերականության ժամկետը:

2. Կապի սպան պարտավոր է պահպանել Եվրապոլի տեղեկատվության եւ գործունեության հետ կապված հայեցողությունը եւ գաղտնիությունը, ինչպես նաեւ ստորագրել դրավերաբերյալ հայտարարություն:

Հոդված 6

Կազմակերպչական հարցեր

1. Եվրապոլն ապահովում է այնպիսի հարմարություններ, որոնք անհրաժեշտ են կապի սպային՝ սույն համաձայնագրում նշված առաջադրանքների եւ պարտավորությունների կատարման համար, ինչպիսիք են գրասենյակային տարածքը եւ հեռահաղորդակցման սարքավորումները Եվրապոլի շենքերում՝ Եվրապոլի ֆինանսավորմամբ: Հեռահաղորդակցության հետ կապված ծախսերը, այնուամենայնիվ, հոգում է Ներքին գործերի նախարարությունը:

2. Եվրապոլն ապահովում է, որ կապի սպան լիովին տեղեկացված լինի իր թուրք գործողությունների մասին եւ առնչություն ունենա դրանց հետ՝ Համաձայնագրին համապատասխան, եւ այնքանով, որքանով դա անհրաժեշտ է իր առաջադրանքները կատարելու համար: Եվրապոլը ձեռնպահ է մնում ցանկացած անհարկի միջամտությունից, որը կարող է խոչընդոտել կապի սպայի գործառույթների եւ առաջադրանքների պատշաճ կատարմանը:

3. Ներքին գործերի նախարարությունն ապահովում է, որ իր նշանակած կապի սպան ունենա արագ եւ, տեխնիկապես իրագործելի ինտելեկտուալ, ուղիղ հասանելիություն դեպի ազգային տվյալների բազաներ, որոնք անհրաժեշտ են կապի սպայի առաջադրանքների կատարման համար:

4. Պարտականությունները կատարելիս կապի սպան պահպանում է Եվրապոլի ներքին կանոնները՝ միաժամանակ ենթարկվելով ազգային

օրենսդրությանը: Մասնավորապես ակնկալվում է, որ կապի սպան գործի
Եվրապոլի վարքագծի կանոնների սկզբունքներին համապատասխան եւ
պահպանի Եվրապոլի շենքերի ապահովության եւ անվտանգության
վերաբերյալ կիրառելի Եվրապոլի կանոնները, այդ թվում՝ Եվրապոլի
անվտանգության կանոնները եւ հրդեհային անվտանգության ու
տարհանման ընթացակարգերի վերաբերյալ կանոնները:

5. Կապի սպան մշակում է անձնական տվյալները՝ տվյալների
պաշտպանության վերաբերյալ իրենց ազգային կամ ինստիտուցիոնալ
օրենսդրությանը, ինչպես նաեւ կիրառելիության դեպքում Եվրապոլի՝
տվյալների պաշտպանության կանոններին համապատասխան:

6. Կապի սպան արտակարգ իրավիճակների դեպքում Եվրապոլին
տեղեկացնում է իր աշխատանքային ժամերի եւ կոնտակտային տվյալների
մասին: Կապի սպան Եվրապոլին տեղեկացնում է նաեւ ցանկացած
երկարած գվոզ անհասանելիության մասին, որը խոչընդոտում է իր
առաջադրանքների կատարումը:

Հոդված 7

Համակարգողը

Յուրաքանչյուր Կողմ նշանակում է համակարգող՝ սույն
համաձայնագիրը գործնականում իրականացնելու հետ կապված ցանկացած
հարցի համար:

Հոդված 8

Պատասխանատվությունը եւ վեճերը

1. Ներքին գործերի նախարարությունը պատասխանատվություն է
կրում Եվրապոլի գույքին կապի սպայի կողմից պատճառված ցանկացած
վնասի համար: Ցանկացած այդպիսի վնաս անհապաղ կփոխհատուցվի Ներքին
գործերի նախարարության կողմից՝ Եվրապոլի կողմից պատշաճ
հիմնավորված պահանջի հիման վրա: Փոխհատուցման հետ կապված

ցանկացած անհամաձայնության դեպքում կիրառվում է Համաձայնագրի 20-րդ հոդվածը:

2. Վեճերը, որոնք կարող են ծագել սույն համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման առնչությամբ, կարգավորվում են Կողմերի ներկայացուցիչների միջեւ խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով:

3. Կողմերի կամ կապի սպայի եւ Եվրապոլի միջեւ հակասության դեպքում Եվրապոլի գործադիր տնօրենը ձեռնարկում է համապատասխան միջոցներ, ներառյալ՝ կապի սպայի մուտքը Եվրապոլի կենտրոնակայան արգելելու կամ այդ մուտքը միայն որոշակի պայմաններով կամ սահմանափակումներով թույլատրելու հնարավորությունը:

4. Եթե Եվրապոլի եւ կապի սպայի միջեւ առկա է լուրջ հակասություն, ապա Եվրապոլի գործադիր տնօրենը կարող է նրան փոխարինելու վերաբերյալ հարցում ներկայացնել ներքին գործերի նախարարություն:

Հոդված 9

Փոփոխությունները

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք կազմվում են առանձին փաստաթղթի ձեւով: Դրանց արդյունքում կազմված փաստաթղթերը համարվում են սույն համաձայնագրի բաղկացուցիչ մասը եւ ուժի մեջ են մտնում սույն համաձայնագրի 11-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 10

Ղաղարեցումը

1. Սույն համաձայնագիրը կարող է դադարեցվել Կողմերից ցանկացածի կողմից՝ երեք ամիս առաջ գրավոր ներկայացված ծանուցմամբ:

2. Չհակասելով 1-ին կետին՝ սույն համաձայնագրի իրավական հետեւանքները շարունակում են ուժի մեջ մնալ:


Հոդված 11

Ուժի մեջ մտնելը

Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ներքին ընթացակարգերն ավարտելու մասին դիվանագիտական ուղիներով Հայաստանի կողմից գրավոր ծանուցվելու օրը:

Կատարված է Երևանում 27 հունիսի 2023թ.-ին, երկու օրինակից՝ հայերեն եւ անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության
Ներքին գործերի նախարարության
կողմից՝



Վահե Ղազարյան

ՀՀ Ներքին գործերի նախարար

05.02.2024թ.

Եվրասիայի կողմից՝



Քեթրին ղը Բոլ

Գործադիր տնօրեն

128

**LIAISON AGREEMENT BETWEEN
THE MINISTRY OF INTERNAL AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA
AND THE EUROPEAN UNION AGENCY FOR LAW ENFORCEMENT COOPERATION**

The Ministry of Internal Affairs of the Republic of Armenia, hereafter referred to as "the Ministry of Internal Affairs", to which the Police is a subordinate state body,

and

the European Union Agency for Law Enforcement Cooperation,
hereafter referred to as "Europol",

- hereafter collectively referred to as "The Parties" or individually as "Party" -

Having regard to Regulation (EU) 2016/794 of the European Parliament and of the Council of 11 May 2016 on the European Union Agency for Law Enforcement Cooperation (Europol) and replacing and repealing Council Decisions 2009/371/JHA, 2009/934/JHA, 2009/935/JHA, 2009/936/JHA and 2009/968/JHA, as amended (hereafter "the Europol Regulation"), in particular Article 23 thereof;

Having regard to the Working Arrangement establishing cooperative relations between the law enforcement authorities of the Republic of Armenia and the European Union Agency for Law Enforcement Cooperation signed on 16 and 28 September 2021 (hereafter referred to as "the Arrangement"), and in particular Article 9 thereof;

Whereas the cooperation between the Parties on the basis of the Arrangement requires the deployment of liaison officers,

Have agreed as follows:

**Article 1
Liaison Officer**

1. The Parties agree to enhance the co-operation as laid down in the Arrangement through the deployment of one or more liaison officer(s) (hereafter "the liaison officer").
2. The number of liaison officers accredited shall be agreed between the Parties.

**Article 2
Tasks of the Liaison Officer**

It shall be the task of the liaison officer to support and facilitate the cooperation between the law enforcement authorities of the Republic of Armenia, Europol and the Member States of the European Union in line with the Arrangement. In particular, the liaison officer shall be responsible for supporting contacts between the law enforcement authorities of the Republic of Armenia, Europol and the Member States of the European Union and for facilitating the exchange of information.

Article 3
Status of the Liaison Officer

1. The liaison officer shall be regarded as a formal representative of the law enforcement authorities of the Republic of Armenia with respect to Europol. Europol shall facilitate the liaison officer's stay within the Netherlands as far as this is within its possibilities; it shall in particular facilitate contacts with the appropriate Dutch authorities in matters of privileges and immunities as far as necessary.
2. The liaison officer shall be a representative of the authorities responsible for preventing and combating criminal offences as defined in the Arrangement.
3. The liaison officer shall perform their tasks on behalf of the law enforcement authorities of the Republic of Armenia and no employment relationship with Europol is established by virtue of the deployment.

Article 4
Exchange of information

1. Any exchange of information between Europol and the liaison officer shall only take place in accordance with the provisions of the Arrangement. Any exchange of information between the law enforcement authorities of the Republic of Armenia and the Europol National Units of the Member States of the European Union or contact points of third parties shall be in accordance with the respective applicable legislation.
2. When exchanging information, the liaison officer shall communicate directly with Europol through representatives appointed for this purpose by Europol. The liaison officer shall not have direct access to operational information processed by Europol in accordance with Article 18 of the Europol Regulation.

Article 5
Confidentiality

1. The Ministry of Internal Affairs shall ensure that the liaison officer is security cleared at least at the level of CONFIDENTIEL UE / EU CONFIDENTIAL or equivalent. A security clearance certificate shall be issued for the liaison officer by the competent national security authority and presented to Europol. It shall clearly indicate the security cleared liaison officer, the security clearance level and the period of its validity.
2. The liaison officer shall be bound by an obligation of discretion and confidentiality related to Europol information and activities, and shall be required to sign a declaration to that effect.

Article 6
Administrative issues

1. Europol shall arrange for the facilities, which are necessary for the tasks and obligations of the liaison officer as outlined in this agreement, such as office space and telecommunications equipment within the premises of Europol, at the cost of Europol. The costs of telecommunication shall however be borne by the Ministry of Internal Affairs.

2. Europol shall ensure that the liaison officer is fully informed of and associated with all its activities, in line with the Arrangement and in so far as necessary for the performance of their tasks. Europol shall refrain from any undue interference preventing a proper performance of the liaison officer's functions and tasks.
3. The Ministry of Internal Affairs shall ensure that its liaison officer has speedy and, where technically feasible, direct access to the national databases necessary for the fulfilment of the tasks of the liaison officer.
4. In the performance of the duties, the liaison officer shall comply with Europol's internal rules whilst being subject to national law. In particular, the liaison officer is expected to act in conformity with the principles of the Europol Code of Conduct and shall comply with the applicable Europol rules on safety and security in the Europol premises, including the Europol Security Rules and the rules on fire safety and on evacuation procedures.
5. The liaison officer shall process personal data in accordance with their national or institutional legislation on data protection, as well as Europol's data protection rules where applicable.
6. The liaison officer shall keep Europol informed of their working hours and contact details in cases of emergency. The liaison officer shall also inform Europol of any extended unavailability preventing the fulfilment of their tasks.

Article 7 Contact point

Each Party shall designate a contact point for any matters related to the practical implementation of this Agreement.

Article 8 Liability and disputes

1. The Ministry of Internal Affairs shall be liable for any damages caused by the liaison officer to Europol's property. Any such damages will be promptly repaid by the Ministry of Internal Affairs, on the basis of a duly substantiated request by Europol. In case of disagreement concerning a repayment, Article 20 of the Arrangement shall apply.
2. Disputes which may emerge in connection with the interpretation or application of the present Agreement shall be settled by means of consultations and negotiations between representatives of the Parties.
3. In cases of conflict between the Parties, or between the liaison officer and Europol, the Executive Director of Europol shall adopt appropriate measures, including the possibility to prohibit access to Europol's headquarters by the liaison officer, or to grant such access only under particular conditions or restrictions.
4. Where there is a serious conflict between Europol and the liaison officer, the Executive Director of Europol may submit a request to the Ministry of Internal Affairs for their replacement.

**Article 9
Amendments**

Amendments may be introduced to the present Agreement by mutual consent of the Parties, which shall be formed as a separate document. The documents formed thereby shall constitute an integral part of the present Agreement and enter into force in accordance with Article 11 of this Agreement.

**Article 10
Termination**

1. This Agreement may be terminated in writing by either Party with three months' notice.
2. Without prejudice to paragraph 1, the legal effects of this Agreement shall remain in force.

**Article 11
Entry into force**

This Agreement shall enter into force on the date of the written notification of Armenia of the completion of all internal procedures necessary for the entry into force of this Agreement, sent through diplomatic channels.

Done at Yerevan on 27 June 2023, in duplicate in the Armenian and English languages, each text being equally authentic.

**For the Ministry of Internal Affairs of the
Republic of Armenia**



Vahe Ghazaryan
Minister of Internal Affairs

05.02.2024

For Europol



Catherine De Bolle
Executive Director

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության միջև» փոխգործակցության մասին համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետ**

